ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2023թ. № 1117

ԱՐՏՈՒՇ ՎԱՆՈՒՇԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 101-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 183 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 180 օրդերը և Արտուշ Վանուշի Եղիազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12102023-06-0029 վկայական՝ տրված 12.10.2023 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շ. Թորոսյան փողոց, 8/2 շենք, 12 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Արտուշ Վանուշի Եղիազարյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Արտուշ Վանուշի Եղիազարյան - ինքը՝ ծնված 02.08.1971 թվականին,
2) Ալինա Համբարձումի Սարգսյան - կինը՝ ծնված 13.06.1974 թվականին,
3) Արթուր Արտուշի Եղիազարյան - տղան՝ ծնված 25.06.1992 թվականին,
4) Էրիկ Արտուշի Եղիազարյան - տղան՝ ծնված 06.11.1997 թվականին,
5) Անուշ Արտուշի Եղիազարյան - աղջիկը՝ ծնված 22.02.2000 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ՝ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. նոյեմբերի 20
ք.Սպիտակ